

Տեր Մեսրոպ քահանա Արամյան
«Այբ» դպրոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ

Կենսագրություն

Ծնվել է 1966 թ. հունիսի 20-ին Երևանում: Ավարտել է [ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցը](#), ապա՝ 1990 թվականին՝ [Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը](#) («Ֆիզտեխ»)՝ ստանալով ինժեների և տեսաբան-ֆիզիկոսի որակավորում: 1995-1996 թթ. հանձնել է Լ. Լանդաուի տեսական ֆիզիկայի միևնույնները և 1998 թ. ընդգրկվել Վիտալի Գինզբուրգի տեսական ֆիզիկայի խումբ: Հայ Առաքելական Եկեղեցու քահանա է ձեռնադրվել 1991 թ. մայիսի 28-ին:

1991 թ. հիմնել է «Գանձասար» աստվածաբանական կենտրոնը, որի տնօրենն ու գլխավոր խմբագիրն է մինչև օրս:

2002 թ. հիմնել է [«ՎԷՄ» հոգևոր-մշակութային ռադիոկայանը](#), որի գլխավոր խմբագիրն է ցայսօր:

2004 թ. հիմնադրել և մինչև օրս ղեկավարում է «ՎԷՄ մեդիա արուեստներ» տեսաարտադրական ստուդիան:

2006 թ. մի խումբ ընկերների հետ հիմնել է «Այբ» ակումբը և «Այբ» կրթական հիմնադրամը:

2013 թ. նոյեմբերի 6-ին հասարակական հիմունքներով նշանակվել է Հայաստանի Հանրապետության նախագահի խորհրդական՝ կրթության հարցերով:

Այս պահին Տեր Մեսրոպ քահանա Արամյանը [Կրթության գերազանցության ազգային ծրագրի](#) (ծրագիրը նախաձեռնել է «Այբ» կրթական հիմնադրամը՝ համագործակցելով [Քեմբրիջի համալսարանի](#) (Անգլիա) և [Լոնդոնի համալսարանական քոլեջի](#) (ԼՀՔ / UCL) [Կրթության ինստիտուտի](#) հետ) ղեկավարն է:

2011 թ.-ից «Այբ» դպրոցի հոգաբարձուների խորհրդի նախագահն է:

Ամուսնացած է, ունի յոթ երեխա: